

Pliny 14

112-124

L A F T U

❑ ՈՐԻ ԲԱՐԻՔԸ ❑

u.

Արեակաւանը վերանորոգել է,
Վարադա-Արեակները յարուրիւն
են առեկ ղոթոյային անդունդներից
Գեղալու ղոթախ Գնէլների
հողակոյսերի վերան է աղբոս
Փառանձեւների լիկի օսարբ
գործում է սանձարձակ Արեակու-
նիների խմարանց իրեաւուրց
Խորձեանում՝
այժմու
ՔՂԻ
գաւառում:

Ականատես:

exp. exp. by me (quarto)

☒ ԲԵՆՅՈՒ ԱԾՈՒ
☒ ՈՐԻ ԲԱՐԻՔԸ ☒
ԴԱՌՆ Է ՈՒ ԿԾՈՒ ☒

Ա.

ՀՐԱԻՐԱԿ ԽՈՐՁԵԱՆ

Արտակաւանք զերանորոգել է.
Վարձաւ-Արտակները յարուրիւն
են առւել դժոխային անգումդներից
Քրքալու դժբախտ Գնէլների
հողակոյտերի վերան: Ու պլրոս
Փառանձեւների լիտի օտքը
գործում է սանձարձակ Արտակու-
նների ամսարանց հիմաւուրց
Խորձեանում
այժմու
ՔՂԻ
գաւառում:
Ականատես:

Ե. Կ. Զաւարթեան (Զաւարթեան)
1913

3846

16727-171



121-2015

18/12/1

ՄԻ

ԳԵՐԻՎԵՐ

ՆԻՔՐ

Համայն Բղեցւոց.
Արանց եւ կանանց,
Ծերոց եւ տղայոց :
Հեղինակից:

Ը Ն Տ Ի Ր Մ Տ Ք Ե Ր

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՆ

Առանց դրական բովանդակութեան աշխարհումս չի կարելի ո՛չ համակրական, ո՛չ էլ հակակրական, բեամական յոյզեր առաջ բերել: Կրակ է հարկաւոր մարդկանց այրելու համար որպէս բեամութեան, նոյնպէս եւ սիրոյ համար:

Բարոյականութիւնը սրտի բանականութիւնն է:

Ամենախորին նեմատնութիւնը բղխում է ամենախորին սիրուց:

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԷ

ՀՐԱԻՐԱԿ ԽՈՐՁԵԱՆ

ՎԱՐԱՄԲԱՐՁ ՀԱՄԲԱՐՁԻ ԴԱՐՁԸ

I

Սրա-Սէլվիլէր՝ Թագսիմ¹ փողոցում,
Պայթւում է յանկարծ մի իրարանցում.
Անշուք ֆորումն է Նշանի-Ղայֆան.
Ուր թէպէտ չը կան խաֆիլէն, թայֆան,
Սակայն կարող ենք կոչել մի աւան,
Աղամ—համայնքի փուճ, ինքնահաւան,
(Թէ մի քիչ զօրենք՝ թերեւս էլ հայվան.)
Քղեցւոց կենդրոն այդ անշուք զայֆան:
Ամբոխն է շարժւում կուտակուն, բարդ-բարդ.
Գետնին են փուլել նարկիլան ու նարտ.
Բեմ է բարձրանում շուտափոյթ, արագ,
Գրեթէ անծանօթ մի ծերուկ վայրագ.
Ձեւը պարզելու չեմ զգում կարիք,
Տեսե՛ք են ամենք Ակնունի, Շահրիկ,
Խօսքն է կարեւոր՝ որ նա խօլարար
Շեշտաւորում էր մէկ-մէկ, բառ առ բառ,
Ահլը-երկիւղից, սարսափից, վախից,
Բերաններն ասես դուած մի մի խից,
Պարծանք չը լինի թէ ասեմ աղատ՝
Ունկնդիրներից ոչ ոք ինձնից զատ
Մտածեց նրա ճառը սղազրել,
Ինչ որ կէտ առ կէտ հանդէս եմ բերել.

« Հայրենի
 Վայրենի
 Քղիի լաճեր ,
 Խաւա՛րի
 Տաւա՛րի

Ճէտն արի քաջե՛ր .

Գլուխն աշխարհի կոչում են Պարիզ ,
 Քղեցւոց բոյնին ասում են Պօլիս .
 Այստեղ է եկել ամենից առաջ
 Մեր պապերից մին խեղճ , լաւահառաչ ,
 Ու նրանից ետք ո՛վ գիտի ո՞ր կողմ
 Ասպատակել է զերթ զօրաւոր հողմ :
 Դիտմամբ եմ ուզողում իմ կոչն այստեղից՝
 Որ եէթմիշ իքի պուչուգ միլլէթից
 Լսողներ լինեն , տեսնողին պատմեն
 Թէ Քղեցիներն իրօք որ հատ մ'են ,
 Համայնք մի անգիւտ , համայնք մ'աննրման ,
 Արար-աշխարհքում ինքն-իրանց նրման :
 Շրջելու եմ ես որպէս բօթաբեր ,
 Անվերջ , անհանգիստ բախտից տարուբեր .
 Չին ու ճապոնից՝ մինչ Ամերիկան ,
 Ուր նոյնիսկ մեր կող , կոյր , քեաչալը կան ,
 Պինդ-գլուխներին անձամբ կարդամ որ՝
 Երկիրն է եղել մի Սողոմ-Գոմոր :

II .

Փխո՛ր , լուռթիւն , ձա՛յն հետդհետէ .
 Հետաքրքրութիւնն ասես մի գետ է .
 Քաղքըցին կ'ասի , «տա՛ , ի՞նչ եաման է» .

Առեցին կ'ասի , «փէտտի աման է»² .
 Ծերուկը ցասկոտ խօսում է կրկին ,
 Անաստ՝ կէս-յիմար , կէս-խօլ-խեռ կրքին ,
 «Ինչ մաղերըդ դառած փուշ-փուշ ,
 Նայում էք ինձ ապո՛ւշ ապուշ ,
 Չէ՞ք ճանաչում ձեր զինաշէն
 Անդոյն կուզ Համբարձ փաշէն .
 Ո՞ր տեղից՝ ո՛ւր , ասելու էք անշուշտ ինձ .
 — Մեռելների տար ու վատթար աշխարհից .
 Տար-վատթար եմ կոչում , այո՛ , տար-վատթար .
 Որովհետեւ մեր սե-հողն էլ կոյս , արդար
 Չի մնաց զերծ ձեր կրքերից անխաթար :
 Նոր օրէ՞նք է , կրկնելու էք . էլի՞ ծլար
 Քարն ու հողը դէն զցեցիր դո՛ւրս ելար
 — Ի՞նչ էք կարծում , համբերութիւն էլ մնա՞ց ,
 Թողուցի՞ք մեզ նոյնիսկ ննջել հողում թաց ,
 Բա՛ , ո՞ր տեղում , ասացէ՛ք ինձ , ո՞ր տեղում
 Հէնց ձեզ նման դամբաններն են աղտեղում ,
 Յնցումներից՝ լեռնադաշտում փուշն ու խարը ,
 Իսկ հողին տակ թնդաց համայն մեր աշխարհը ,
 Ու վերջին անգամ երբ բերին դադաղ ,
 Եկաւ Տունօյին Սօման ծերուկ , կաղ
 Մեռնե՛մ ես նրա չինարի բօյին
 Որ հիւրը եղաւ Հէսսօ-Թուրօյին
 Այս տէր և տիկին ժամկոչներին զոյգ
 Որ մեր նորեկին ջանն են ու բազուկ .
 Իր հետ ունէր մի գրքոյկ ձեռագիր ,
 Որ բերնէ-բերան գիտէր նա անգիր :
 Կասկածը փոխեց իրականութեան ,
 Երբ վկաները այր , կին ու մատեան

Հաստատ փաստերով ցոյց տւին բոլոր,
 Թէ ձեր քաղքն ուր, ընթացքն է մոլոր:
 Կատարւածներից սոսկալի ու խիստ,
 Մենք էլ շարունակ անդուլ, անհանգիստ,
 Մի ժողով արինք, խորհրդակցեցանք,
 Մանրամանաբար նիւթի շարքն անցանք,
 Ու ձեզ մօտ դտանք իսկական յանցանք:
 Խօսեցին կարգաւ ջրկիր, քարկոփը,
 Նախադահոււմ էր Պարոն-Ակորը:
 Հարկ էր մեզ ճարել մի Աղքատ-Ղաղար
 Ու բաղմուծիւնից բիւրաւոր, հաղար,
 Ինձ ուղարկեցին որպէս պատւիրակ,
 Ներկայացնելու մի «Նոր-հրաւիրակ»:
 Թերեւս տաէք թէ այնտեղ Յիսուս կա՞ր
 Որ հողի տակից ինձ հանել դուրս գար.
 Կա՞ր հետքը արդեօք Մարիամ-Մարթային
 Որ ինձ ի նպատակ խնդիրք կարդային.
 Սրան պատասխան՝ այժմ կ'ասեմ ձեզ.
 Անցեալ Յիսուսը իր հոգով մեզմ', հեզ,
 Խրոխտ լրբերիդ լպիրշ, կատաղի,
 Մօտ ապագայում իսկոյն կը թաղի.
 Նա ե' հին ե' նոր, ե' բարի ե' չար,
 Ակն-ընդական է գոչում չարնաչար:
 Բացէ՛ք աչերըդ, նայէ՛ք մէկ ուշով
 Ձեզ մօտ եմ եկել վարդով ու փուշով,
 Սա այն գրքոյն է՝ ուր պատկերւած կան-
 Ծերունիներից մինչ փոքրիկ-ծծկան
 Երեխերք-մանկանց արարքը պիղծ-գարշ,
 Սիրտը աղտեղի, հողին գետնաքարշ,
 Իսկ սա հրացայտ գործին տեսնում էք

Որը ճկո՛ւն է, մահացո՛ւ, անբե՛կ,
 Կտրո՛ւմ է անցնո՛ւմ մարդ, լեռ-ժէռ մէկ-մէկ:
 Սրահի բեմից Պօղոսից Արդօն
 Երբ յայտարարեց որպէս Նոր-Կատոն
 Թէ հարկ է քանդել Քղին-Քաղկեդոն,
 Նրա հրաւէրին այս կուռ, բարձրագոյ,
 Գործի սկսեցին լուսարար, ժամկոչ.
 Ամենն էլ տւին իրանց բաղուկը,
 Բարձրահասակն ու միջակ, թզուկը.
 Ու մինչ Քերպոզի տէմիրջուն գալը՝
 Փքոցն էր շարժում Սօղոյինց Լալը.
 Ոսկորի կոյտից հանւած երկաթով,
 Ահա այս գործին գործին շինեցինք խանդով:
 Ու ջուրն էլ տւինք հանդարտ, անվրդով,
 Վաղամեռ կանանց ծծերին կաթով:
 Սրա անունը դրել ենք «Վրէժ»:
 Սա ձերն է Տօ՛նօ, Շէկօ ու Տրէ՛ժ,
 Սա՛ է սուրբ-պատուի միակ պաշտպանը
 Որի թափին տակ ստրուկն, անբանը,
 Կիրքն ու տափանքը, անբարոյ-կեանքը,
 Հագնում են մահու կեղտոտ պատանքը:
 Է՛հ, շատ չերկարեմ, առժամեայ գուցէ,
 Իմ այս սուր-գործին իր աչքը գոցէ.
 Սակայն արթուն է ու միշտ սրատես,
 Ի հարկին իսկոյն նետւելու հանդէս:
 Յարգանք մատուցէք Մեծ-Վիպասանին,
 Խրիմեան-Հայրիկ Վեհ-Սրբազանին,
 Տան ու օջախի, խղճի-Գուսանին:
 Որ չը թողեց հէնց առաջին անգամ
 Լոկ սուրը բերել ձեզ իբրեւ պատգամ.

Այլ նա համոզեց որ փոխան կրքի,
 Նախ պէտք է դիմել խօսքի ու երգի:
 Սօնայի բերած այս փոքրիկ մատենան՝
 Որ անւանւում է «Հրաւիրակ-Սորձեան».
 Ինձ պատէր տւին կարդալու կրկին.
 Մտիկ արէք ձեր լրբութեանց շարքին:



ԴԱՆԱԿՐ ՈՍԿՈՐԻՆ ՀԱՍՍԱԻ

Է՛լ չեմ կարող լռել
 Պէ՛տ է որ խօսեմ:
 \$01,US0

I.

Է՛յ ածիւններն իմ նախկին հայրերի.
 Ո՛վ դուք երբեմնի վայրի վայրերի
 Տէրերն ինքնիշխան, խոհուն նահապետ,
 Պատւի ուղուրին ջուրն ընկնող սասկետ,
 Շարժեցէք մի քիչ, թէկուզ մի բոպէ՝
 Ձեզնից խնդրածըս չանթ կամ ամպրոպ է.
 Մի ճար եմ հայցում, մի ճար անպատճառ.
 Հարկաւոր էլ չի կարդալ երկար ճառ.
 Եւ որպէս զի դուք շնոտ լաւ հասկանաք:
 Թէ իմ արածը իսկի չի հանաք,
 (Արդէն չեմ սիրում ո՛չ մի ժամանակ),
 Զգւած, յուսահատ ողջ-մեռելների,
 Ժանտապեցերի, կրքերի գերի
 Լիբք մարդկութիւնից՝ ձե՛զ ձե՛զ եմ դիմում
 Դո՛ւք, դո՛ւք էք միակ յոյսըս մաքսիմում:
 Կամ Մա՛հ կամ Նո՛ր-Կեանք, Զնշո՛ւմ կամ պատիւ
 Ներկայ դրութեան որպէս չափաթիւ
 Ուղարկում եմ ձեզ իմ իսկ պատրաստած՝
 Ողողւած ճակտիւս քրտինքովը թաց
 Ստոյգ լրատուն՝ մի ինչ որ գիրք է,
 Այրից մինչեւ քէ կրքի յանկերգ է:

Բարեխախտութիւն, որ մերին ճարտար
Տունային Սօնան եղաւ թղթատար .
Աչքով տեսածն էլ թող նա ձեզ պատմի,
Թէ գրեած քուժըս սխալ կա՞յ հատ մի .
Որպէս զի գործը լինէր պարզ, ջնջին,
Սուրբ մ'էլ վարձեցի գումարով չնչին,
— Ի կիթն էքմէրչունց՝ քաղքին էշէկջին, —
Որ սուտ չի կցում «այո»ին, «ոչ»ին .
Ինչ էլ կարգադրէք ինձ համար մէկ է .
Սակայն՝ «թէնճրդէ խճրդ պիր մէգէ» 5 ,
Թելադրում է ճիշդ առածը քիւրտին,
Ասենք՝ կարօտ չէք իմին խորհրդին .
Դուք էլ խօսեցիս զաւակն էք եղել,
Խարխուլ շէնքերին հիմ դուք էք պեղել .
Հետեւաբար՝ էլ ձեզ է պատկանում...
Չեմ էլ հարց տալիս թէ ինչ էք անում,
Բայց դո՛ւք էք կեանքի, մահու փորձառուն,
Կարող՝ զուգելու և՛ ջուր, և՛ առուն .
Սրանք գրեցի իբր հայրենակից,
Ուրիշ ոչ մի բան չի գայ իմ ձեռքից .
Ինչ որ արել են Սոկրատ, Պլատոն,
Կարո՞ղ է միթէ Պաղօյնց Պաղտօն...

II.

Իսկի՛ գործ չունեմ պէտք է ասել նախ
Սուտ-փուտ խօսքերի, բառերի նահախ,
Հայեցողութեան առածրդական .
Սրանք՝ պատկերն են կեանքին լրական,
Ճշմարտութիւններ երկրաչափական,

(Բայց ոչ Յովսէփի հաց ու փորն՝ որ կան⁶)
Ինչ որ պարզում է Բզիի ներկան :
Լոկ սոխ ուտողի աչերն են կժուում,
Երբ հոս համայնքի խնդիրն է ծեծում՝
Ինքներն էլ գիտեն՝ որ երեք-չորրորդ,
Ճահճի ցեխումն են որպէս քաջ-լուզորդ :
Թէկուզ ասեն ինձ ծթրած, տիրացու,
Բայց քաշեկու չեմ Հայր-Խորենացու
Ողբին հետեւել որպէս, հիմ, կուան,
Թէկուզ պոռչրտան ինձ՝ ինքնահա՛ւան :

III.

Ողբում եմ ա՛յ քեզ Բզի՛ գաւառակ,
Հոգո՛ւղ անառակ, կեանքիդ խայտառակ,
Կիրք ու առփանքի դո՛ւ ցցուն խարակ,
Կանգնած հեղեղում շւայտանքների
Որ կուլ է տալիս թափն ովկեանների .
Դու նոյնիսկ չարժած Հին-Հռոմների,
Բաբելոնների կեղտո՛տ կոյուղին,
Բռել ես նրանց խո՛ւ, ստոր ուղին :
Առանց լսելու Ներսիի շանր՞
Արդէն եղել ես դու այդ շուն-շանր
Որդին հարազատ, լակոտն իսկական,
Պահելով միայն անունդ Հայկական :
Քո այդ վիճակում գիտեմ թէ հայ ես .
Բայց Հայկայ զարմին նախատի՛նք, վա՛յ ես :
Հայկ ու Արմենակ անունն ի՛նչ արած .
Երբ դու ծնւել ես զազիր արարած,
Հոգով՝ ամբարիշտ, ու մարմնով դեղին,

Տեղովը տիպար Մանգուլեան ցեղին .
 Ասա՛, մի՛ լռիր, Փարօն ու Աշոտ
 Թէ՛ վէլօն, Մէժօն են խիստ վաւաչոտ,
 Սակայն քեզանում պատիւն ու նախանձ .
 Ազգն ու այլազգի մի չե՛ն ու մի անձ .
 Թէ չես ցանկանում մնալ միշտ խեցի,
 Որդնահար ճահճում, ենթակայ ցեցի,
 Դէ՛հ, հանդէս արի՛, նա՛մարդ Բղեցի .
 Ու երբ դէն գցւի իրեւիդ քողը՝
 Պարզւում է անշուշտ թէ ո՛վ է գողը .
 Մի՛ վախիր, վերցրո՛ւ փականք, նիզ, սողնակ,
 Հրապարակ քաշի՛ր Օսնակ՝, Ապողնակ,
 Այստեղ չե՛ս տեսնում որպէս մեղւաց պարս,
 Տարփոտ քիւրտ-բէգն ու լիզգած հայ-հարս .
 Ապա իջի՛ր վար Օրօր ու Տարման,
 Տուփանքի չափին կա՞յ դեղ ու դարման
 Իրապէս սեռ կա՞յ կին, տղամարդի
 — Գաճաճ ու խաղուխ, գիհի ու բարտի —
 Ծմակ-Ծերմակի՞ն ինչ հարկ է ասել .
 Բայց ես կարծում եմ հարկ չի սպասել .
 Ու երկար-բարակ չի պատմած մէսէլ,
 Նէճիպի կանանց հարէմում դասել .
 Առեցինե՛րը . . . ծերուկից՝ տղան,
 Ինչպէս ասել է խեղճ Մեսրոպ Աղան,
 Որ թէկուզ ջանան ցերեկ ու գիշեր,
 Էլի մնում են Աղամի-էշեր .
 «Մակարն-Օհանը», «Լուսնկան-Ջուրը»,
 «Լախանին Արտը», «Բօզն ու Ուրուրը»,
 Անեկտօտներն՝ այս թէ մէկ-մէկ դարսեմ,
 Պարզ է որ ե՛ս էլ պի՛տ կոչեմ սերսէմ .

Ագրակն ու Հէրտիֆ, Ասողներէն ու Չան
 Միթէ՞ չեն կրում քիւրտի փարաջան .
 Իսկ գետի անդին գինո՛վ, սրիկայ
 Խուրսեցիներին հարցնելու հարկ կա՞յ .
 Մարդիկ՝ որ միայն անելով թօխա,
 Ճնկում են մէկանց երեք-չորս օխա .
 Ու դեռ լրբաբար քարայրում, արտում,
 Կոյսի պատին են լլկում, արատում .
 Եւ սա խարերայ Սերկեւիլն անբա՞ն .
 Որ արտածում է գրեթէ ամէն բան
 Ու—Դատ չի կորցնող Մէմիշ փաստաբան¹⁰ —
 Միթէ՞ չէ անվերջ ենթակայ խաղին
 Սեւ-սաղբանքներին Շխօլին տղին .
 Մի թեթեւ ակնարկ յառես դէպի Հողաս,
 Կարելի՞ է որ մարմնով չի դողաս .
 Գործը՝ կեղծութիւն, ապրուստը՝ թաւան,
 Բաւ է որ տէրտրուն կ'ասեն Տէր-Եալան .
 Աղբըզուան ապ՞ա, տեղովը ապտալ
 Որ գիրն են տանում ձպրգիւղ կարդալ .
 Ու մանկայ փոխան հարսը դիւրրնտել,
 Խօջային կը տան մարգել ու կրթել .
 ձպրգիւղն ի՛նչ է . իսկութեամբը ճորտ
 Մի լրբի՝ որին կայ միշտ մի յաջորդ .
 Ուր ամէն տեսակ փուջ, պուտալա կան,
 Պաշտող կարգերին ֆէօտալական .
 Բարբարոս քիւրտին գերին խուլիգան՝
 Լիչիկն ու Չիֆթլիկ, Առինձ, Մելիգան՝
 Դիակ Բղիի չե՛ն պոչն՝ Աֆրիկան .
 Բնակչաց ՚ի տես մարդ կ'ասի արդէն .
 «Տօ՛, էլի՛, ախր սրանք էլ մա՛րդ են»

191-2015

(6727-57)

Հացը՝ սե-աղար, ջուրը՝ քինքինա,
 Մի կերպ կեանք է որ եօլա կը գնայ,
 Սակայն ի՞նչ զարմանք Ձիֆթլիկից այսօր
 Բուսել է նոյնիսկ մի բրօֆէսօր,
 Եւ տեսած անձամբ փառլսէնն ու Վուհտ,
 Բայց գլխումը կուռտ կա՞յ խելքի մի հունտ:
 Կապիկն՝ զգեստով էլի կապիկ չէ՞.
 Ֆիլօզօֆ դառած՝ բա՛ Ձիֆթլիկցի չէ՞.
 Թէպէտ կարդացած Գեօտէ ու Նիցչէ
 Կարծել թէ նա մի զրօ՛-գեղացի չէ՞:
 Իբր արջի նմոյշ Տինէկում տիպար
 Ձի կա՞յ Պօղոսյից Մովսէս քիպար.
 Էլ մի՛ հարցուցէք Հանգստուն, Ապար,
 Որ ցածացել են՝ գետին պարապար.
 Տինէկում եղածն այնտեղ կը մնայ,
 Հագստունինն էլ ջուրը կը գնայ.
 Ու մինչ ակտը գայ կամայ, տքալէ՛ն
 Փակւած կը գտնի հէնց Փա տը Բալէն:
 Եւ ինչ որ լա՛ւն է, է՛հ բաւականին
 Պրծնում են դոնէ մէկ կամ մի քանին.
 Հաղորդակցութեան այս մեծ արգելքը
 Մատնանշում է բնութեան խելքը.
 Երբ արջն ու մագին, ցինն ու նապաստակ,
 Իրար մօտ ապրեն դաստակ առ դաստակ,
 Ի՞նչ է դուրս գալիս. ի՛նչ ա՞յ թէ վաստակ.
 Պարզ է որ դա պիտո՛ լինի կրնանքը,
 Ու վերածննդի Բաբելեան կեանքը:
 Հա՛ ... քիչ մնաց որ մոռացման տայի
 Գլուխը-գործոցը Տրովադայի
 Կեղտոտ խողերին պիղծ, սաչմա-սափան,

Պիգանքի կենտրոն՝ Բիլի-Գասապան,
 Ահա մի քաղաք՝ ուր կնամարդիկ
 Ծախում են իրանց զերդ ըմբիշ, մարտիկ,
 Էրկրտիքն ասես՝ ետէ՛ ... կուռկուռի ձագ
 Չօ-Մուշօների¹¹ սատկած մի տրցակ.
 Հաւասարութիւն... անբստգիւտ պիտակ,
 Որի շւաքում՝ համոզւած, գիտակ
 Սէֆֆա են քշում Ծաղօն ու Մուսօն:
 Նախընտրելով միշտ Մէմօն ու Մուսօն.
 Անիծ չէ՞ միթէ դանդաղ Անգլուհին՝
 Բաղդատած առոյգ Բիլուհի լուին.
 Նրանք նոր դրած քէի պահանջ,
 Մերոնք գործում են անսանձ, աննահանջ:
 Ուր են դպրատան վարիչներն անկար
 Երբ մի ուսուցչի կնիկն անպատկառ,
 Լիրբ, հանած-վարած պոռնիկն անամալ՝
 Դպրոցականներ ե՛ւ աղջիկ, ե՛ւ մանչ
 Ծահագործում է հաղար-մի՛ կերպով,
 Ե՛ւ միջնորդութեամբ ե՛ւ մսով-ճարպով,
 Ու դեռ նա տէրն է շինած-դրածին,
 Ձի էլ բողոքում իշուկ դրացին.
 Ու թող նա քաղքի հէնց կենտրոնումը,
 Ծարունակի իր ծախում-գնումը:
 Ո՞ր տեղից ճարեմք մի խարախանեան
 Որ ձեռից խլած մագոգն ու ջայնա,
 Նախապէս գցած աղբուրին գուռը,
 Ծակատին քսած իւղն ու սեւ-մուրը՝
 Հեծացնի իշուն ցոփամայր-Կոճոն,
 (Ինչ որ յիշում է անշուշտ ծեր-ձոճոն),
 Էշոյինց Գիւոն իւլարը քաշի,

Կինն էլ յետեւից ժողովում քչի,
 Ժողովարանից՝ Կուզկանց տանն ետեւ,
 Նրանց՝ դոժինքով ¹² լոկեն յարատեւ:
 Երեւնդ Հայր-սուրբը ¹³ այն միակ անձը
 Մեր տարտարորի անարատ գանձը
 Կարող էր միայն մի դարման անել,
 Բայց նա հանդիպեց ա՛յնպիսի անել
 Լապիրինթների, մատնութեան փոսին,
 Քիչ մնաց լինէր բաժին գողոսին ¹⁴:
 Կարիճ-Վահրիճն ¹⁵ իսկ շատ ու քիչ չափով
 Աշխատանք թափեց ուժգնակի թափով.
 Նա՝ մեր քաղաքում վատ չէր երեւում.
 Բայց ի՞նչպէս Պօլսում չքեց վերեւում:
 Վարդապետ, տէրտէ՛ր, այժմ ամենք չինձու.
 Մեծ-պատին համար լաւն են՝... թուրչիցու,
 Չորս տարի մնաց առաջնորդ Պսակ ¹⁶,
 Գոյն տւաւ-առաւ չորս-հազար տեսակ,
 Երբ հովը փչեց ձորից Քարական ¹⁷,
 Մկրտեց իսկոյն թունդ-Դաշնակցական,
 «Հնչակեան դարձի՛ր» երբ փսաց Փարօն,
 «Դրամ փոխ կուտա՞ս, հա՞, աղնի՛ւ պարոն»
 Ասաց և կղեւ Հնչակ այս անգամ,
 Իսկ երբ ջոջերից ընդունեց պատգամ,
 Ուղղեց առ Աստուած աղերս բիւր-միլիոն,
 Մինչեւ որ դարձրեց իրան քամէլիոն.
 Ու ճահճանոցում գորտն ու արագիլ,
 Կենդանիք պէս-պէս, ճիրան ու մագիլ,
 Գունափոխ ձեռի իշխանութեան տակ՝
 Աստիճան մ'էլ վար իջան դէպ՝ յատակ.
 Երբ Ազգի տունն ու Պալունց էրգիբը ¹⁸

Ներկայացնում են միեւնոյն դիրքը
 Փարախ մի անշուք, լու՛ռ, խաղաղական,
 Երէկեան մոզին՝ այսօր թաղական,
 Սրտելակ հովիւն հովըսուկ, թռած,
 Պողոսն աթոռին՝ ինք դէմը թառած
 Բնական է որ ոչխարին պողը
 Նրան կը գցի ուղի՛ղ խոր-փոսը.
 Բարի՛ ազատում. նա գնաց խարբերդ.
 Թերեւս էլ մի օր այնտեղից Բաբերդ.
 Ու թէ չը գտնի մի անառիկ բերդ
 Վերջապէս Պօլսում կը ծախի... կապերտ,
 Որ քիչ փող ճարի գնել գաւաթ,
 Օ աը քօլօներ, օձիք և... հաւատ:
 Քա՛նի տէրտէրներ մեր պիղծ գաւառում
 Զրեր են կապել այս-այն կաւառում...
 Նրանց շարքերում եղել է հատ մ'էլ
 Որի մասին ինձ չորս տող են պատմել.
 «Բուրվառ ծխելիս տէր-հայրն է քխում
 — Ժամը քա՞նիսին, Ժամը քա՞նիսին,
 Կինն է խաչ հանում. պատասխան թխում.
 — Գիշերւոյ տասին, գիշերւոյ տասին»
 Ուսման վիճակին այժմ ձեռք զարնենք.
 Խնչ էլ-գլխութիւն, օ՛հ, ի՞նչ զաղի՛ր, նե՛նգ.
 Ո՞ր հայրն անպիտան, ո՞ր մայրը մօրու
 Իր աղջկանակին տամնուհինգ տարու
 Մարդու չի տալիս — գալանի բերան —,
 Վարժատան չեմքից զրկելով նրան.
 Ծարժառի՞մն ինչէ. չա՛հ, չա՛հ, էլի՛ չա՛հ,
 Զեր խօսքովն ոսեմ, փառսո՛ւն ¹⁹ պէ՛, եաշա՛.
 Վա՛յ-անտեսագէտ, չայ-գնտեսագէտ.

Ոչինչ չե՛մ ուզում. սա գիտնայիք գէթ
Որպէս մարդ գործել. դրամ տնտեսել,
Ու մարդավարի միջոցով ծախսել,
Աշունից չանցած մի-երկու ամիս
Ո՛րի տանում կայ չորցած, աղի միս.
Ինչպէ՞ս չի ճաքւում ձեր այդ կոկորդը,
Երբ կուլ էք սալիս ուլ, գառն ու հորթը.
Կուլ տալ՝ հում ուտել չի նշանակում.
Դեռ ապրցուն էլ հեռն էք կուտակում,
Ու էրիկ-կնիկ ճծերով խլրոտ
Շարւում էք ծակաչք թէնճիրէյլին լօտ...
Մղելով մարտը ձեռքի, դգալի
Որին վերջակէտ խկի չի գալի:
Զորս-հինգ օխա իւղն ի՞նչպէս էք թխսում,
Յետոյ էլ շան պէս կործկլտում, փխսում,
Իշու աշխատանք, կովի ուտելիք,
Ահա ինչ որ կայ ձեր քով գիտելիք.
Իսկ երբ կարգը գայ աղջըկայ ուսման,
«Տա՛, ինտո՛ր ըլլինք մեր փարին տուչման.
Աղջիկն ի՞նչ է որ.— քուրջի մի կտոր
Եւայի վարտիք, իժ, ճղակոտոր,
Աւելցուկն ուտող, ջուր լակող միկի,
Որ լինելու է օտարին կնիկ.
Արժո՞ւմ է միթէ դրա համար էլ
Մէթէլիկ ծախսել, տան-մարդ համարել.
Ու այս միտումով որդեգրել էք դուք
Տխտիւկ քիւրտերի առածին փտուկ.
«Հէխիսո՛, խիդ ըռա, թա՛ու ըվ քու խիդ է.
Եէք հալապի ճաւ, բա՛րքի նան պէս է.»²⁰

Կովերի՛դ համար զո՛րդ որ այդպէս է,
Ամերիկայի հնոցներում վառ,
Գործանոցի խո՛ւլ անկեան միջ խաւար
Կոյս-հոգին փախ, տքայ զերդ տաւար,
Կոկորդներիցըդ դո՛ւք քփսեցէք վար
Նրանց քրտինքը հաւար հա՛ հաւար,
Որպէս թշնամուց թալանած աւար:
Ու տարիներից մաշւա՛ծ, ուրւական,
Կէս-թոքախտաւոր Հայրենիք կը գան,
Աղջիկն է լինում Ագչամ-պազարին,
Զո՛ր տարաբախտ նարտին ու զարին.
Զուգաւորելով կրակն ու վառօթ,
Անատամ ձին ու գարնայնի արօտ,
Ծաղիկն յանձնելով ձեռներին բորոտ,
Թռչնիկն՝ ոգեվար դաշտերում խարոտ.
Սուրբ-սիրտն էլ ի՞նչպէս չի բարձրացնի ոտ,
Ամպերից հայցել որո՞տ, հա՛, որո՞տ...
Իսկ հետենա՞նքը.— ձեր ձեռներով չոր
Սրտերով սեփ-սե, պիղծ, տափատոշոր,
Մատղաշ ծաղկանցից ալ, ալւան, կապուտ
Որքա՞ն էք յանձնել հոգին կողոպուտ.
Որին գիտակ չին ուղեղները բուլթ:
Մի քանի տարւան տղայաբերքը
Զէ՛ բաղմապատկել դամբանի բերքը.
Այո՛, չեմ բժիշկ կամ մի դիտնական,
Բայց այս մտքերը հէնց կեանքից կը գան.
Վախենամ՝ բժիշկ բառն է չը գիտէք,
Ճանաչո՞ւմ էք ձեր տօկտօրին խեւ-դէգ
Մի ուրիշն էլ կայ ինչ որ ջին-քէօչէկ,
Ահ այդ գայլերը դահի՛ճ, մարդասպան՝

Սատանի կողմից այդտեղ են դեսպան .
 Եւ ո՞վ է ասել մօխն նայելով
 Շունն էլ չի լինի մի կեանքահոլով .
 Չէ՞ք տեսնում ով քիչ դեղի-հոտ առել ,
 Դանակը ձեռին տօկտօր է դառել ,
 Ու արմատներով գլխին է թառել .
 Իսկ դժուր . հէք հոգին ճամբորդ լինելիս ,
 Նոր էք վեր կենում , արտասուում , լալիս ,
 Բնական է որ խասապը պարտի
 Զոհին ճոպնեցնել զերդ մի չոր բարտի ,
 Որ չարչարանքից պրծնի , հանդարտի .
 Ու ոչ ձեզանից՝ գէթ Աստուածանից
 Վարձ են ստանում . . . ո՞վի ու անիծ .
 Տօկտօր-Շարապը ²¹ որպէս Հիպպոկրատ .
 Քրիստ ²² Սանկրատօ ինչպէս և Սոկրատ :
 Տղտուր-կուլտուրի ջոկերը չէ՞ր բաւ ,
 Կէս-եգիպտական պատիժ մ'էլ եկաւ .
 Կարծէք Յիսուսը այդտեղ հօտ չունէ՞ր
 Ծլեցան ինչ որ հոտառու շուններ ,
 Թաղային տխմար կռիւը քիչ էր
 Սուրբ-Հոգին բերին մի կարգ փուջ-փիջներ . . .
 Եւ ազատելու Քղին դժոխքից՝
 Աջ ու ձախ տւին աքացի ու կից
 «Մեղէօրականին» — ժամի տէլ տէրին ,
 Սփռելով լոյսը Մարտին Լուսերին ,
 Գեհինից փախած ո՞վ էր այն Գահմէն
 Որ խառնակչի պէս ոտք հանեց ամէն
 Յարանւանական շուն-կատուն դէնդէս
 Իրար կոչելու կռուփի հանդէս ,
 Սա այն փուճը չի՞ որ թարբերդ գալիս ,

Վստմ է յանկարծ որ Մարդըւանից
 «Արգատեան-սոխակ» ների աւանից
 Ամսական վարձը աւել են տալիս ,
 Հէնց ամբիոնից ճառ է մրմնջում՝
 Թէ Տէրը իրան Մարդւան է կանչում ,
 Ասածու հետ խօսող այս սեւ-խաբերան
 Ինչո՞ւ գիշերով ձեռք առաւ ճամբան .
 Ծեծից վնասեցաւ թէ՛ ապրանքն հատաւ
 Խորքերդ շտապեց բերելու կտաւ ,
 Մինչեւ յաջողէր՝ համայնակըրօն ,
 Անդամ ²³ մկրտել մեր Արդար-Կարօն :
 Գնալը եղաւ էլ գալը չեղաւ ,
 Արդեօք նալերը տնկեց ու պաղա՞ւ
 Կարծեմ թէ . . . ուղիղ դրախտը փախաւ :
 Այժմ նրանից կայ է՛լ աւելին ,
 Տիրլօմաթ գալը՝ Մինաս պատուելին ²⁴
 Այս սատանորդի տեսուչը սատուկ ,
 Գառան մորթ հազած , կայնուկ թէ նատուկ ,
 Հաւատակիցին չալում է տուտուկ
 Մեղքերիս վերան դեռ բարդենք սա էլ
 Որ այդ թուլամորթ բէխը սաղայէլ
 Ամերիկայից իբրեւ Ռամկավար
 Ջեզանից՝ թաքուն պոկելու աւար
 Առաքելական պաշտօն է առել
 Շափօ-ալնոցով վարիչ է դառել
 Որ հէնց սկզբից պայթեցրից ական
 Վարժապետներին խեղճ Դաշնակցական .
 Եւ քանի Քղին տխմար , անբան է
 Նրան լոկողել ի՞նչ , դժա՞ր բան է .
 Իբրեւ մանկավարժ ու քաջ-հոգեբան ,

Նա ձեռք է բերել մի Նոյեան-Տապան -
 Դա նոր-սերնդի—մանուկ տղայոց—
 Ուսումնարանն է բազմութիւնով հոծ :
 Որպէս զի հիմքը լինի քարայէն
 Ու այնտեղ դառնայ անդամներ չէն ,
 Հովիւ է ճարել գաղափարակից
 Իրանց Սուրբ-Հոգու կենտրոն փարախից -
 Հեռու չի գնա՞նք . դեռ անցեալ տարւան -
 Այն ի՞նչ էր եկաւ ուսուցչի-քարւան ,
 Քանի՞սը կային . հա՞ նրանց միջից
 Որ չէին առել ուսում Գօլէճից .
 Ծիգ-ջանք էր թափում մեր ձագը գայլի
 Հռչակել «թէքմիլ մուզիր , ալայլի» :
 Ու թէ չը լինէր մի փոքրիկ միթինկ ,
 Նա դեռ պիտ չալէր տափուլը թի՛նկ , թի՛նկ
 Պսակից պրծաք թէ սա էլ քչէք ,
 Թերեւս մի քիչ դուլ . դադար քաշէք .
 Ականջը խօսի . . . Հայ Միացեալին .
 Նա՛ կրնայ զրկել իր նախկին եալին՝
 Հոգու-աւազակ այս Չագրճալին :
 Մի վերջին խօսք էլ՝ գիրքը պիտ՛ փակեմ .
 Ի՞նչ դէպքերի էլ դեռ անգիտակ եմ .
 Բայց ամենից մեծ ու ամենից ցեց
 Խնդիրն առաջին անելու եմ ծեծ ,
 Ո՛ւր են երբեմնի քաջառո՞ղջ , հսկայ
 Լողքար վերցնող կորիւններն հայկայ .
 Կարո՞ղ էք գտնել Դլարդի տղան՝
 Որ իր հօր թողած հօշքի տէյնէկով
 Հէնց Մամրգանցի բէգի քթին քով ,
 Տասը քիւրտ մէկանց անի տարմ-տաղան :

Ինչո՞ւ Պատէռն ու Մլգոն Մալոյինց ²⁵
 Չագ չունենային իրանց պէս ուղտ , ինձ ,
 Տիգօ-Թալանը , Եսրոնն ու Վաղօն
 Անընական չե՞ն և կամ թէ գողօն :
 Ներկայ մանուկը ինչո՞ւ թիգ ու կէս ,
 Քլէճ-գաճաճ է զերթ գետնի բզէզ .
 Իշուն ու ձիուն քոռակն է ջորի
 Ձերն որ այդպէս չի՛ յանցա՞նքը որի .
 Ընկերութիւնը արծւին , ճնճղուկին ,
 Կարո՞ղ ենք կոչել մի զոյգ , այր ու կին :
 Մի տեղ աղջիկը առատ լինելիս
 Խաթ-որբեւարուն մատղա՞շն են տալիս ,
 Ի՞նչ որ յատուկ չէ կենդանեաց շարքին ,
 Նա հիմն է լպիրշ ձեր վարք ու բարքին :
 Բնութիւնն արդէն արձակում է կանչ ,
 —Ամեն կենդանի զգում է պահանջ . . . —
 Միքրոպից լռնած՝ մինչեւ փիղն ու արջ .
 Բայց՝ ո՛չ ձեզ նման կանաչ ու կակարչ .
 Կոկոն հասակից գիշութեան որդին
 Յաջորդը լինել պագչոտ նախորդին :
 Պիղծ բնագոյններից ամենից պիղծը ,
 Դարձել է ձերին իտէալ—իղձը .
 Անասուններից՝ մինչեւ մարդ անւան՝
 Ամէն ինչ ունէք՝ ամենադաւան :
 Ծնից էլ շուն չի՞ այն գաղանն ստոր
 Որ իրա հարան է պղծելու սովոր ,
 Եղբայրը յաջորդ . . . հարազատ եղբօր .
 Այս վատ արարքին ի՞նչ ածական տալ
 Բնութեան պահանջ թէ՛ լիբ սքանտալ , ²⁶
 Դրօշմը մահացու մի ցեղի վանտալ ²⁷


Վերջին մի քանի տարւայ ընթացքում,
 Սո՛ւլ անկիւններում՝ այս ու այն ծածքում,
 Քանի՞-քանիսի գոյնը դուրս ելաւ
 Կրակը մարաւ, օջախը փաւ .
 Բայց ի՞նչոք գոնէ չեղաւ ձեզ մի դաւ,
 Սոյս տալու դասից այդ ստորադաս:
 Էլ ո՞ր մէկն ասել, ո՞ր մէկին թւել .
 Ահա ամէնը նւաղ, առաւել,
 Ինչ որ տեսել եմ ես աչօք-բացօք,
 Ձեզնից հաստատող չեմ փնտռում ո՛չ-ոք
 Բացի վրէժից . Շանթից անողոք,
 Ճիշդ է. ոչի՛նչ են շան-քարոզն ու ճառ,
 Սեւին՝ ի՛նչ խրատ, սեւին՝ ի՛նչ օճառ:
 Խղճի կատարեալ հանգստութիւնով,
 Տողերս եմ օծում ժահրով ու թոյնով .
 Միայն իմ վարձը պիտ' լինէր աւագ,
 Երբ մէն մի հայի հարադատ դաւակ
 Ինչպէս մատնիչին կոչում է վասակ,
 Լրբի ճակատին իբր արժան պսակ,
 «Փոխան «Արիկայ» «Անբարոյ-ցեց»ի՝
 Գոչէր սրտաբաց. «Ա՛յ դու ՔՂԵՅԻ»:

Պոլիս 1912

ԲԱՑԱՏՐԷԼԻ ԲԱՌԵՐ ՈՒ ԱՍԱՑԻԱԾՆԵՐ

1. Սրա-Սէլվիէր=Պոլիս-Բերայի մի թաղամասը:
2. «Փեֆի աման է»=Որ և է անհասկանալի բառ կամ գէպք.
այս ոճով են բացատրում Առէք-գիւղացիք:
3. Պարսն-Սկոք=Երբեմնի կրօնաւորի, ապա գեղադործ և
կարծիքի թագաւոր:
4. Մաֆսիմում=Առաւելագոյն
5. «Թէնքըգէ խնրգ պիր մէգէ»=(քիւրմ) ստիպողականութեւն
թիւնն է մատնանշում որ և է գործի շուտափոյթ
կարգադրման:
6. Յով. Երկ. Ճգմա=Այս պարոնը քննութեան ընթաց-
քում իբր երկրաչափան ճգմարտիւն յիշէլ է «հաց
ուտեմ եէ փորս կը կշտանայ»:
7. Շան = (թիւրք) համբաւ, փառք:
8. Օսնակ, Ապաղնակ, Օրօր, Տարման, Ծերմակ, Առէք,
Ագրակ, Հէրսիճ, Ասողաբերդ, Չան, Սերկելի կամ
Սերկելիլի, Ադրբգուս, Ճպրգիւղ, Հողաս, Լիչիկ,
Չիքրիկ, Մեկիման, Տիմէկ, Հանգստուն = Քղիկ
Հայաբնակ գիւղերից:
9. Աննկաօս=Մանրավէպ:
10. «Դաս չի կոցնոյ Մէմիօ փաստարան»=Ուսումնա-
րանի անունն իսկ չլած ու լոկ իրա զաւմաղաւների
փորձառութիւնից, բանտում դարբնած մի չէլիկ-
բերան, որի ախոռի ճակատին փայլում են այս
բառերը:
11. Զօ-Մուչօ=Ապուշ, լղրճուկ:
12. Դոմիմ=Բերանից վար հոսող մածուցիկ հիւթ, լորձունք:
13. Երանդ վրդ.=Ներկայ Պատ, Փոխ, Պօլի (Փերտահճեան)
14. Դոդոս=Բանտ, հին-րէժիմեան զնդան:
15. Վահրին վրդ.= Օսմ. Սահմ. սկզբի օրերում սպանւած
Պօլսում (Էհրամճեան):
16. Պսակ վրդ.=Տէմ-Խորէնեան կարմիր-մօրուսաւորը:
17. Բարական ձոր=Քղի-քաղաքի կից ամառնային անբար-
գիւտ հանգստարանը:

18. Պալուցն էրդիբ. Կուզկանց ասնն եսեւ=նշանաւոր
բամբասատեղիք:
19. Փառօցն=կեցցե՛ս, (ի խորոց սրտից)
20. Հէլսլսօ խիզ քու...= (քիւրա) Ազջիկ-արմատի համար
մի մետր կտաւ ու մի բրդուճ հաց բաւական է:
21. Sofsor Շարապ=Ինքնակոչ յաջորդը բժշկութեան Հայր
Հիպոկրատի: Սրա նշանաբանն է, ամէն հիւանդի
գինի ու կազող խմացնել, Եւ երեկոյեան ժամը Վից
անց (Ը. Թ.) անկողնից վեր չկենալ, թէկուզ մեռ-
նազը լինի իր ամենից մօտիկ աղգականներից:
22. Sol. Քըլս=Հանճասպան-վիրաբոյժ և ճարտասան պրօ-
պագանդիստը Արծիւեան կուսակցութեան (որի
կենդրոնատեղին է տապախանան, նախագահը՝ Սօ-
ղօյինց Առաքելը). ըստ աւանդութեան, ինչպէս և
գործքից, եղական յաջորդն է նկատուում Սպանիացի
Ժիլ-Պլատի Տօկ. Սանկրատօյին. ինչու որ նրա նման
երկու միջոց է գործադրում «Արուն առնել և
ջուր խմացնել...»
23. Անդամ= Խալիս-բողոքական, Սոմինի ու գինու արժանի:
24. Պաս. Մինաս= Հայ. Միացեալ Ընկ. Կարնիշրջանի տե-
սուչ ծնեալ ժողովարանի ամպիոնի ներքեւ, մա-
կանւանեալն Մինասեան:
25. Պամէռն ու Մլգոն Մալօյինց=Քղիի ներկայ Տորք-Ան-
գեղները:
26. Սփանալ=Գայթակղութիւն:
27. Վանալ=Բարբարոս:



ՄԻԵԻՆ ՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻՑ

1. Արցունքի գոհը (Պօէմա) 1 դր. 10 փր. Կարին
2. Կեանքի Բովում (Բնասդծ.) 2 դր. Պոլիս

ԼՈՅՍ Է ՏԵՍՆԱԼՈՒ

Տասնորեակին

. Ազին

(Բօկաչիօյի ծննդեան 600ամեակի առթիւ) (Պօէմաներ)



Հ Ազգային գրադարան



NL0336236

ՀՀ Ազգային գրադարան



NL0336235

ՀՀ Ազգային գրադարան



NL0336234

ՀՀ Ազգային գրադարան



NL0336233

ՀՀ Ազգային գրադարան



NL0336232

ՀՀ Ազգային գրադարան



NL0336231

ՀՀ Ազգային գրադարան



NL0652294



NL0336230

ՀՀ Ազգային գրադարան



NL0336229

ՀՀ Ազգային գրադարան



NL0336228

ՀՀ Ազգային գրադարան



NL0336227

ՀՀ Ազգային գրադարան



NL0336226

ՀՀ Ազգային գրադարան



NL0336225

